

1.3. ԳՆԵՐ և սակագներ

2000թ. հունվար-դեկտեմբերին գների փոփոխություններն ըստ հանրապետության տնտեսության առանձին հատվածների

(տոկոսներով նախորդ ամսվա նկատմամբ)

	Սպառողական գների ինդեքս <sup>1)</sup>	Արդյունաբերողների արտադրանքի գների ինդեքս <sup>2)</sup>	Գների ինդեքսը կապիտալ շինարարությունում <sup>3)</sup>	Բեռնափոխադրումների սակագների ինդեքս <sup>4)</sup>	Գյուղատնտեսական մթերքների իրացման գների ինդեքս <sup>5)</sup>	Գյուղատնտեսության արտադրության միջոցների գնման գների ինդեքս <sup>6)</sup>
Հունվար	101.9	100.1	99.2	97.9	98.9	101.2
Փետրվար	100.1	100.0	100.0	102.1	96.8	99.5
Մարտ	99.6	101.7	101.0	100.1	100.1	96.8
Ապրիլ	99.2	98.5	100.0	100.0	89.6	98.1
Մայիս	99.7	101.3	100.0	100.7	91.4	102.5
Հունիս	99.7	99.0	100.0	100.8	71.9	104.7
Հուլիս	98.0	100.3	99.9	102.0	81.8	104.9
Օգոստոս	98.7	98.2	100.0	100.1	95.0	101.2
Սեպտեմբեր	100.3	100.3	100.9	98.9	96.1	98.5
Հոկտեմբեր	100.0	100.0	100.1	99.2	101.0	103.1
Նոյեմբեր	100.9	99.7	100.0	101.7	101.7	99.4
Դեկտեմբեր	102.4	99.1	100.0	101.0	114.8	98.3
2000թ. դեկտեմբերը 1999թ. դեկտեմբերի նկատմամբ	100.4	100.4 *)	101.0	104.7	101.1*)	107.4*)
2000թ. հունվար-դեկտեմբերը 1999թ. հունվար-դեկտեմբերի նկատմամբ	99.2	100.8	100.6	100.9	89.0	104.3

\*) 2000թ. դեկտեմբերի և 1999թ. դեկտեմբերի փաստացի գներով հաշված:

1) Ըստ գործող մեթոդաբանության, ՀՀ-ում գների դիտարկումը կատարվում է նախորդ ամսվա 21-ից հաշվետու ամսվա 20-ն ընկած ժամանակահատվածում Երևան քաղաքում և հանրապետության 9 մարզերում (բացի Արարատի մարզից) 400 անվանում ապրանք (ծառայություն) - ներկայացուցիչների գծով:

2) Գների դիտարկումը կատարվում է 111 արդյունաբերական բազային կազմակերպություններում՝ 283 անվանում արտադրանք - ներկայացուցիչների գծով:


3) Ըստ ՀՀ քաղաքաշինության նախարարության տվյալների:

4) Հաշվարկվում է տրանսպորտի 4 տեսակներով (երկաթուղային, ավտոմոբիլային, օդային և խողովակաշարային)՝ բեռնաառքումների դիտարկված սակագների հիման վրա:

5) Ըստ 6000 գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների կողմից իրացված 61 անվանում գյուղմթերքների իրացման գների և ծավալների հետազոտման տվյալների:

6) Ըստ 6000 գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների կողմից 92 անվանում արտադրության միջոցների գնման գների և ծավալների հետազոտման տվյալների:

Գների, սակագների աճի տեմպերը 1999-2000թթ. հունվար-դեկտեմբերին, տոկոսներով (նախորդ տարվա դեկտեմբերը=100.0)



**Սպառողական գների ինդեքս:** 2000թ. մարտ-օգոստոսին արձանագրված գների ընդհանուր մակարդակի 5.0 % նվազմանը սեպտեմբերին հաջորդեց 0.3 % գնաճ: Հոկտեմբերին գրանցվեց սպառողական գների հարաբերականորեն կայուն մակարդակ, ինչը նույնքերին և դեկտեմբերին դարձյալ փոխակերպվեց սղաճի, ընդ որում սպառողական շուկայում դեկտեմբեր ամիսն առանձնացավ համեմատաբար բարձր սղաճով (2.4 %): 2000թ. արձանագրված գնային փոփոխությունները մեծապես պայմանավորված էին պարենային ապրանքների գնային փոփոխյամբ՝ կապված պարենային որոշ ապրանքատեսակների սեզոնայնության, սպառման կառուցվածքի, պահանջարկի և առաջարկի հարաբերակցության փոփոխության հետ: Սպառողական գների փոփոխությունների վրա, թերևս, քիչ չէր արժուպային շուկայում դրամի՝ ԱՄՆ դոլարի նկատմամբ հաշվարկային փոխարժեքի, ինչպես նաև բենզինի և դիզելային վառելիքի գնային փոփոխությունների ազդեցությունը:

**Սպառողական գների ինդեքսը 1999-2000թթ.**

(տոկոսներով)


	<b>Ընդամենը</b>		<b>այդ թվում</b>						
	նախորդ ամսվա համեմատ	նախորդ տարվա դեկտեմբերի համեմատ	պարենային ապրանքներ		ոչ պարենային ապրանքներ		ծառայություններ		
			նախորդ ամսվա համեմատ	նախորդ տարվա դեկտեմբերի համեմատ	նախորդ ամսվա համեմատ	նախորդ տարվա դեկտեմբերի համեմատ	նախորդ ամսվա համեմատ	նախորդ տարվա դեկտեմբերի համեմատ	
	<b>1999 թվական</b>								
Հունվար	104.0	104.0	102.7	102.7	100.2	100.2	113.1	113.1	
Փետրվար	100.0	104.0	99.7	102.4	100.1	100.3	100.9	114.2	
Մարտ	99.4	103.4	99.2	101.6	99.8	100.1	99.8	113.9	
I եռամսյակ	103.4*)	103.4	101.6*)	101.6	100.1*)	100.1	113.9*)	113.9	
Ապրիլ	100.4	103.8	100.7	102.3	99.9	100.0	100.1	114.0	
Մայիս	100.5	104.3	101.0	103.2	100.0	99.9	100.0	114.0	
Հունիս	100.0	104.3	99.7	102.9	99.9	99.8	100.7	114.8	
II եռամսյակ	100.9*)	104.3	101.3*)	102.9	99.7*)	99.8	100.8*)	114.8	
Հուլիս	96.8	100.9	94.5	97.2	99.2	99.0	100.0	114.8	
Օգոստոս	99.1	100.0	96.5	93.8	102.5	101.5	100.2	115.0	
Սեպտեմբեր	100.3	100.3	98.4	92.3	100.7	102.2	100.5	115.6	
III եռամսյակ	96.2*)	100.3	89.7*)	92.3	102.4*)	102.2	100.7*)	115.6	
Հոկտեմբեր	100.5	100.8	100.0	92.3	100.0	102.3	99.8	115.3	
Նոյեմբեր	100.2	101.0	100.2	92.5	100.1	102.3	99.8	115.1	
Դեկտեմբեր	101.0	102.0	101.6	94.0	100.5	102.9	100.1	115.2	
IV եռամսյակ	101.7*)	102.0	101.8*)	94.0	100.7*)	102.9	99.7*)	115.2	
	<b>2000 թվական</b>								
Հունվար	101.9	101.9	103.0	103.0	99.7	99.7	100.2	100.2	
Փետրվար	100.1	102.0	100.0	103.1	99.3	99.1	100.0	100.2	
Մարտ	99.6	101.6	98.6	101.7	101.7	100.8	100.1	100.3	
I եռամսյակ	101.6*)	101.6	101.7*)	101.7	100.8*)	100.8	100.3*)	100.3	
Ապրիլ	99.2	100.8	98.5	100.1	100.3	101.1	100.1	100.4	
Մայիս	99.7	100.5	99.7	99.8	99.1	100.2	100.2	100.6	
Հունիս	99.7	100.2	99.1	98.9	101.5	101.7	100.3	100.9	
II եռամսյակ	98.6*)	100.2	97.2*)	98.9	100.9*)	101.7	100.6*)	100.9	
Հուլիս	98.0	98.2	96.2	95.2	101.3	103.1	100.4	101.3	
Օգոստոս	98.7	96.9	98.3	93.6	98.5	101.5	99.9	101.2	
Սեպտեմբեր	100.3	97.2	100.7	94.2	99.4	100.9	100.2	101.4	
III եռամսյակ	97.0*)	97.2	95.2*)	94.2	99.2*)	100.9	100.5*)	101.4	
Հոկտեմբեր	100.0	97.2	99.9	94.1	100.1	101.0	100.1	101.6	
Նոյեմբեր	100.9	98.0	101.2	95.2	101.0	102.0	100.3	101.9	
Դեկտեմբեր	102.4	100.4	104.3	99.4	99.6	101.6	100.0	101.9	
IV եռամսյակ	103.3*)	100.4	105.5*)	99.4	100.7*)	101.6	100.5*)	101.9	

\*) եռամսյակի վերջին ամիսը նախորդ եռամսյակի վերջին ամսվա համեմատ:

Սպառողական գների ինդեքսը 2000թ. դեկտեմբերին 1999թ. դեկտեմբերի համեմատ կազմել է 100.4 %, ինչը 1.6 տոկոսային կետով ցածր է նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածում արձանագրված գների մակարդակի ընդհանուր փոփոխությունից (102.0 տոկոս): Նշված ժամանակահատվածում պարենային ապրանքների (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ) գների ինդեքսը կազմել է 99.8 %, ոչ պարենային ապրանքներինը՝ 101.6, իսկ ծառայությունների սակագներինը՝ 101.9 %:

2000թ. դեկտեմբերին նոյեմբերի համեմատ սպառողական գների ինդեքսը կազմել է 102.4%՝ 1.4 տոկոսային կետով գերազանցելով 1999թ. նույն ժամանակահատվածի համապատասխան ցուցանիշը (101.0 %): Սպառողական շուկայում դեկտեմբերին արձանագրված ընդհանուր գնաճը հիմնականում պայմանավորվել է պարենային ապրանքների գնաճով: Նշված ժամանակահատվածում պարենային ապրանքների (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ) գնաճը կազմել է 3.6%: Ծառայությունների սակագները մնացել են նախորդ ամսվա սակագների մակարդակին, իսկ ոչ պարենային ապրանքների գծով գրանցվել է գների 0.4% նվազում:

ՀՀ սպառողական շուկայում պարենային, ոչ պարենային ապրանքների գների և ծառայությունների սակագների փոփոխությունները 2000թ. հունվար-դեկտեմբերին, տոկոսներով (նախորդ ամիսը = 100)



2000թ. հունվար-դեկտեմբերին սպառողական գների միջին ամսական հավելաճը կազմել է 0.05 %՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 0.2%-ի դիմաց:

2000թ. հունվար-դեկտեմբերին 1999թ. նույն ժամանակահատվածի համեմատ սպառողական գների ինդեքսը կազմել է 99.2%, այդ թվում՝ պարենային ապրանքներինը (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ)՝ 97.8%, ոչ պարենային ապրանքներինը՝ 103.0%, ծառայությունների սակագներինը՝ 101.5%:


**Գների միջին ամսական փոփոխությունները 1999-2000թթ., եռամսյա կտրվածքով ըստ հանրապետության տնտեսության առանձին հատվածների ու ապրանքախմբերի**

(տոկոսներով)

	1999 թ վ ա կ ա ն				2000 թ վ ա կ ա ն			
	I	II	III	IV	I	II	III	IV
Սպառողական գների ինդեքս	101,1	100,3	98,7	100,6	100,5	99,5	99,0	101,1
այդ թվում՝								
պարենային ապրանքների (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ)	100,5	100,3	97,8	100,9	100,6	99,3	98,6	101,5
ոչ պարենային ապրանքների	100,1	99,9	100,8	100,7	100,3	100,3	99,8	100,2
ծառայությունների	104,4	100,2	100,2	99,9	100,1	100,2	100,2	100,1
Արդյունաբերողների արտադրանքի գների ինդեքս	100,9	98,9	101,1	100,3	100,6	98,8	100,3	100,05

	1999 թ վ ա կ ա ն				2000 թ վ ա կ ա ն			
	I	II	III	IV	I	II	III	IV
Գների ինդեքսը կապիտալ շինարարությունում	101,3	100,1	100,1	100,1	100.1	100.0	100.2	100.05
Բեռնափոխադրումների սակագների ինդեքս	99,8	100,1	100,7	99,5	100.1	100.5	100.3	100.6
Գյուղատնտեսական մթերքների իրացման գների ինդեքս	97,3	100,7	95,0	104,7	98.9	94.8	96.2	110.6
Գյուղատնտեսության արտադրության միջոցների գնման գների ինդեքս	98,6	102,9	98,5	99,6	98.8	103.8	100.1	99.7

**ՀՀ սպառողական գների ինդեքսի և ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի հաշվարկային փոխարժեքի փոփոխությունները 1999 - 2000թթ. հունվար-դեկտեմբերին տոկոսներով (նախորդ տարվա դեկտեմբերը =100)**



2000թ. առաջին եռամսյակում թե՛ սպառողական, և թե՛ արժույթային շուկայում գրանցվել են գների և ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի հաշվարկային փոխարժեքի համամասնական փոփոխություններ: Ապրիլ-հուլիս ամիսներին, ի տարբերություն սպառողական գների, որոնք նվազել են 2.0-0.3%-ով, արտարժույթի շուկայում գրանցվել է ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի հաշվարկային փոխարժեքի 0.6-1.8% հավելաճ: Օգոստոսին վերոհիշյալ երկու ցուցանիշներն էլ նվազել են, իսկ սեպտեմբերին սպառողական շուկայում արձանագրված 0.3% սղաճի պայմաններում գրանցվել է փոխարժեքի 0.1% նվազում, ինչն էլ, իր հերթին, հաջորդ երկու ամիսներին վերածվել է հավելաճի՝ կազմելով համապատասխանաբար 0.9% և 2.0%: 2000թ. ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի հաշվարկային փոխարժեքի ամենաբարձր ցուցանիշն արձանագրվել է նոյեմբեր (555.46 դրամ) և դեկտեմբեր (554.63 դրամ) ամիսներին, իսկ ամենացածրը՝ հունվարին (526.91 դրամ):


2000թ. դեկտեմբերին նախորդ ամսվա համեմատ սպառողական շուկայում արձանագրված 2.4% գնաճի պայմաններում, արտարժույթի շուկայում գրանցվել է ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի հաշվարկային փոխարժեքի 0.1% նվազում: 2000թ. դեկտեմբերին 1999թ. դեկտեմբերի համեմատ սպառողական գների և հայկական դրամի հաշվարկային փոխարժեքի հավելաճը կազմել է համապատասխանաբար 0.4% և 5.8%: 1999թ. համապատասխան ժամանակահատվածում սպառողական գների և փոխարժեքի մակարդակն աճել է համապատասխանաբար 2.0% և 1.2%-ով:

**Պարենային ապրանքներ:** Ընթացիկ տարվա դեկտեմբերին 1999թ. դեկտեմբերի համեմատ պարենային ապրանքների շուկայում արձանագրվել է գների 0.6% նվազում, ինչը 5.4 տոկոսային կետով ցածր է նախորդ տարվա համապատասխան ցուցանիշից (6.0%): Դա

հիմնականում պայմանավորված է դիտարկված որոշ պարենային ապրանքների սեզոնայնությամբ: 2000թ. մարտ-հոկտեմբեր ամիսներին արձանագրված պարենային ապրանքների գների 8.7% նվազմանը նույնքեր և դեկտեմբեր ամիսներին հաջորդել է համապատասխանաբար 1.2 և 4.3% գնաճ: Պարենային ապրանքների շուկայում արձանագրված գնային փոփոխությունների մեծ մասը բաժին է ընկնում մրգի, բանջարեղենի և կարտոֆիլի ապրանքախմբերին:

2000թ. դեկտեմբերին նախորդ տարվա դեկտեմբերի համեմատ բանջարեղենի և կարտոֆիլի ապրանքախմբում արձանագրվել է 18.3% գնաճ՝ նախորդ տարվա 12.3% նվազման փոխարեն: Դրան, թերևս, նպաստել են 2000թ. անբարենպաստ բնակլիմայական պայմանները: Հունվար-փետրվար ամիսներին բանջարեղենի և կարտոֆիլի ապրանքախմբում արձանագրված 33.3% գնաճին հաջորդեց գների նվազում, ինչը շարունակվեց մինչև հուլիս ամիսը՝ ընդհանուր նվազման մակարդակը կազմելով 37.2%: 2000թ. հաջորդ ամիսներին, բացառությամբ հոկտեմբերի, երբ բանջարեղենի և կարտոֆիլի ապրանքախմբում գրանցվել էր 7.3% նվազում, դարձյալ նկատվեց 5.1-24.9% գնաճ (գնաճի ամենաբարձր ցուցանիշը արձանագրվել է դեկտեմբերին):


**Բանջարեղենի և կարտոֆիլի գների ինդեքսը 1999-2000թթ. հունվար-դեկտեմբերին**  
(նախորդ տարվա դեկտեմբերը =100)



2000թ. դեկտեմբերին նույնքերի համեմատ դիտարկված բոլոր բնակավայրերում գրանցվել է բանջարեղենի և կարտոֆիլի գների զգալի աճ՝ կազմելով 18.0-40.1% (համեմատաբար բարձր գնաճ արձանագրվել է Եղեգնաձորում): Երևանում բանջարեղենի և կարտոֆիլի գնաճը կազմել է 24.3%: Ընթացիկ ամսում նկատելիորեն աճել են վարունգի (1.5 անգամ), լոլիկի (1.4 անգամ), կաղամբի (43.0%), գլուխ սոխի (28.5%), ծաղկակաղամբի (17.8%), գազարի (11.0%), կարտոֆիլի (6.6%) գները:

2000թ. դեկտեմբերին 1999թ. դեկտեմբերի համեմատ մրգի ապրանքախմբում գրանցվել է գների 3.8 տոկոս գնաճ՝ նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի 17.1 տոկոս նվազման դիմաց: Մրգի ապրանքախմբում հունվարին գրանվցած 21.3% գնաճը հաջորդ երեք ամիսներին փոխակերպվեց գների նվազման՝ ընդհանուր նվազման մակարդակը կազմելով 4.7%: Սալիս և հունիս ամիսներին, սեզոնայնությամբ պայմանավորված, նկատվեց կտրուկ գնաճ, ինչը հաջորդ 3 ամիսներին փոխակերպվեց գների, ընդհանուր առմամբ, 46.2% նվազման: 2000թ. չորրորդ եռամսյակում դարձյալ գրանցվեց մրգի գնաճ՝ կազմելով հոկտեմբերին՝ 1.8%, նոյեմբերին՝ 10.1% , դեկտեմբերին՝ 14.6%:

Մրգի գների ինդեքսը 1999-2000թթ. հունվար-դեկտեմբերին  
(նախորդ տարվա դեկտեմբերը =100)



Գրաֆիկից ակնհայտ է, որ և՛ 1999թ., և՛ 2000թ. մրգի գնային փոփոխությունները հիմնականում եղել են համամասնական (բացառությամբ ապրիլ, մայիս, հունիս ամիսների), պարզապես 2000թ. վերջին մի քանի ամիսներում մրգի գնաճը 1999թ. նույն ժամանակահատվածի համեմատ ունեցել են առաջանցիկ աճի տեմպ:

2000թ. դեկտեմբերին նախորդ ամսվա համեմատ մրգի գնաճը կազմել է 14.6%, ինչը պայմանավորված է հանրապետության դիտարկված բոլոր բնակավայրերում մրգի 0.9-40.5% գնաճով (գնաճի համեմատաբար բարձր ցուցանիշ արձանագրվել է Դիլիջանում): Ընթացիկ ամսում նկատելիորեն աճել են խաղողի (53.1%), խնձորի (35.2%), տանձի (34.4%) գները: Միաժամանակ, սեզոնայնությամբ պայմանավորված, գների զգալի նվազում է արձանագրվել կիտրոնի (28.7%), մանդարինի (21.5%), նարնջի (12.9%), ադամաթզի (6.2%) գծով:

2000թ. հունվար-օգոստոսին ձկնամթերքի ապրանքախմբում գրանցված 28.6% նվազմանը սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսներին հաջորդել է գնաճ (1.9 անգամ): Դեկտեմբերին նախորդ ամսվա համեմատ ձկնամթերքի գնաճը կազմել է 21.7%, ինչին մեծապես նպաստել է թարմ (սիգ) և ապխտած ձկան գների համապատասխանաբար 22.2% և 24.7% գնաճը: Հանրապետության դիտարկված բոլոր բնակավայրերում ձկնամթերքի գնաճը կազմել է 0.6-29.4% (համեմատաբար բարձր գնաճ արձանագրվել է Երևանում):

2000թ. դեկտեմբերին, ինչպես և նախորդ երկու ամիսներին, կաթնամթերքի ապրանքախմբում գրանցվել է գնաճ՝ երեք ամսվա ընդհանուր գնաճը կազմելով 10.3%, այդ թվում. հոկտեմբերին՝ 1.0%, նոյեմբերին՝ 1.1%, դեկտեմբերին՝ 8.1%, ինչը բացատրվում է խտացրած կաթի (19.3%), մածունի (15.7%) և թարմ կաթի (14.4%) գնաճով: Հանրապետության դիտարկված բնակավայրերից 9-ում կաթնամթերքի գնաճը կազմել է 0.1-12.1% (համեմատաբար բարձր գնաճ արձանագրվել է Երևանում), իսկ Դիլիջանում գրանցվել է նշված ապրանքների գների 0.8% նվազում:

2000թ. դեկտեմբերին 1999թ. դեկտեմբերի համեմատ հանրապետությունում ձվի գնի ընդհանուր նվազումը կազմել է 7.6%, իսկ դեկտեմբերին նախորդ ամսվա համեմատ գրանցվել է ձվի նկատելի գնաճ՝ կազմելով 8.7%: Հանրապետության դիտարկված բնակավայրերից 8-ում ձվի գնաճը կազմել է 0.3-12.6%: Դիլիջանում պահպանվել է ձվի գնի նախորդ ամսվա մակարդակը, իսկ Մարտունիում գրանցվել է գնի 4.9% նվազում:

2000թ. դեկտեմբերին 1999թ. դեկտեմբերի համեմատ մսամթերքի գների ընդհանուր մակարդակը հանրապետությունում նվազել է 5.1%-ով, ինչը 1.8 տոկոսային կետով ցածր է նախորդ տարվա համապատասխան ցուցանիշից (6.9%): 2000թ. առաջին 5 ամիսներին

(բացառությամբ փետրվարի) նկատվել է մասնաբերքի թեթևակի գնաճ՝ գնաճի ընդհանուր մակարդակը կազմելով 1.3%: Հունիս-նոյեմբեր ամիսներին մասնաբերքի ապրանքախմբում արձանագրվել է գների 7.0% նվազում, իսկ դեկտեմբերին նախորդ ամսվա համեմատ գրանցվել է 0.7 տոկոս գնաճ: Ընթացիկ ամսում հանրապետության դիտարկված բնակավայրերից մասնաբերքի գնաճ գրանցվել է միայն Երևանում (4.2%) և Վանաձորում (0.3%), իսկ մյուս 8 բնակավայրերում դիտվել է գների 9.9-0.4% նվազում:

2000թ. հունվար-սեպտեմբերին կենդանական և բուսական յուղի ապրանքախմբում գրանցված գների 9.4% նվազումը տարվա վերջին 3 ամիսներին փոխակերպվեց գնաճի՝ կազմելով համապատասխանաբար 0.9%, 1.4% և 1.0%: Հրուշակեղենի ապրանքախմբում 2000թ. հունվար-հոկտեմբերին գրանցված գների 3.8% նվազմանը նոյեմբերին հաջորդեց հարաբերականորեն կայուն գնային մակարդակ, իսկ դեկտեմբերին արձանագրվեց 1.1% գնաճ:

2000թ. փետրվար-սեպտեմբերին հացամթերքի ապրանքախմբում գրանցված 4.8% նվազմանը հոկտեմբերին հաջորդեց հարաբերականորեն կայուն մակարդակ, իսկ նոյեմբերին և դեկտեմբերին՝ գնաճ, կազմելով համապատասխանաբար 0.1% և 0.2%:

Սուրճի, թեյի, կակաոյի, ինչպես նաև ոչ ոգելից խմիչքի ապրանքախմբերում 2000թ. բոլոր ամիսներին արձանագրվել է գների նվազում՝ ընդհանուր նվազման մակարդակը կազմելով համապատասխանաբար 8.8% և 2.6%: Դեկտեմբերին նախորդ ամսվա համեմատ սուրճի, թեյի, կակաոյի, ոչ ոգելից խմիչքի գները նվազել են 0.2%-ով:

Ոգելից խմիչքի և ծխախոտի ապրանքախմբում 2000թ. դեկտեմբերին 1999թ. դեկտեմբերի համեմատ արձանագրվել է 2.1% գնաճ, ընդ որում, եթե նշված ժամանակահատվածում ոգելից խմիչքների գները նվազել են 1.6%-ով, ապա ծխախոտի գծով գրանցվել է 2.6% գնաճ: 2000թ. հունվար-ապրիլին գրանցվել է ծխախոտի 4.6% գնաճ, ինչը մայիս-սեպտեմբերին վերածվել է գների 0.6-0.1% նվազման, իսկ հոկտեմբերին և նոյեմբերին նկատվել է ծխախոտի գների որոշակի կայունացման միտում: Դեկտեմբերին նախորդ ամսվա համեմատ ծխախոտի գները նվազել են 0.1%-ով, իսկ ոգելից խմիչքի գծով պահպանվել է գների նախորդ ամսվա մակարդակը:

**Ստորև բերված են գների փոփոխություններն ըստ պարենային առանձին ապրանքախմբերի**

(տոկոսներով)

	2000 թվականի				դեկտեմբերը 2000 նոյեմբերի նկատմամբ	հունվար-դեկտեմբերը 1999թ. հունվար-դեկտեմբերի նկատմամբ
	մարտը 1999թ.	հունիսը	սեպտեմբերը	դեկտեմբերը		
<b>Պարենային ապրանքներ</b> (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ)	102.0	99.7	95.5	99.8	103.6	97.8
<b>Պարենային ապրանքներ</b>	101.7	98.9	94.2	99.4	104.3	94.1
հացամթերք	99.2	98.3	95.4	95.6	100.2	96.7
մասնաբերք	100.2	100.9	96.8	94.9	100.7	95.0
ծկնամթերք	104.9	81.0	81.1	139.6	121.7	93.7
կաթնամթերք	99.5	94.6	91.1	100.5	108.1	94.3
ծու	85.8	79.9	82.8	92.4	108.7	91.5
կենդանական և բուսական յուղ	95.5	92.3	90.6	93.6	101.0	90.4
միրգ	117.1	150.3	80.8	103.8	114.6	83.4
բանջարեղեն և կարտոֆիլ	131.1	100.1	96.0	118.3	124.9	90.9
շաքարավազ	91.4	101.7	111.3	114.9	99.9	96.6
սուրճ, թեյ, կակաո	95.6	92.6	92.0	91.2	99.8	92.0
հրուշակեղեն	98.4	97.5	96.4	97.3	101.1	96.6
ոչ ոգելից խմիչք	99.1	98.5	97.9	97.4	99.8	98.1
<b>Ոգելից խմիչք և ծխախոտ</b>	103.8	103.5	102.1	102.1	99.9	128.0

Մի խումբ պարենային ապրանքների գների համեմատությունը տավարի մսի գնի նկատմամբ.

(տոկոսներով)

	1999թ.	2000 թ վ ա կ ա ն				
	դեկտեմբեր	մարտ	հունիս	սեպտեմբեր	դեկտեմբեր	միջին տարեկան
Միս տավարի	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0
Չուկ	38.4	40.1	29.9	32.7	62.9	38.0
Կաթ	21.2	21.6	19.9	21.3	27.9	21.9
Պանիր	124.8	122.7	116.5	118.0	137.4	122.2
Կենդանական յուղ	144.7	137.1	130.0	135.1	160.7	139.4
Բուսական յուղ	59.2	55.9	52.9	53.8	58.2	55.6
Չու ( տասնյակ )	43.8	37.3	34.3	37.8	45.6	38.7
Հաց	20.5	20.3	20.2	20.9	22.6	20.9
Մակարոն	26.3	25.5	24.4	25.7	27.8	25.8
Վերմիշել	26.3	25.6	24.4	25.7	27.8	25.8
Շաքարավազ	21.3	19.4	21.3	24.9	27.8	22.7
Բրինձ	29.6	29.4	28.9	30.8	33.8	30.4
Աղ	9.4	9.4	9.2	9.8	10.6	9.7
Կարտոֆիլ	9.4	10.8	8.7	11.7	13.9	10.6
Խնձոր	20.8	24.9	29.8	11.4	21.4	21.0
Թեյ	319.8	304.4	297.5	317.1	343.6	315.4
Սուրճ	249.9	232.9	227.0	240.9	257.2	238.7

Աղյուսակում բերված հաշվարկներից ակնհայտ է, որ 2000թ. դեկտեմբերին վերը նշված ապրանքատեսակների գները տավարի մսի գնի համեմատ 0.4-28.6 տոկոսային կետով գերազանցել են միջին տարեկան համապատասխան ցուցանիշները: Հարկ է նշել, որ վերը բերված հաշվարկների համաձայն, տարեվերջին արձանագրվել է նշված ապրանքատեսակների գների համեմատական (տավարի մսի գնի նկատմամբ) աճ, ինչը հիմնականում պայմանավորված է դեկտեմբերին տավարի մսի գնի նկատմամբ: 2000թ. դեկտեմբերին 1999թ. դեկտեմբերի համեմատ բերված ապրանքատեսակների գները տավարի մսի գնի նկատմամբ (բացառությամբ բուսական յուղի, ինչի գինը նվազել է 1.0%-ով) ունեցել են առաջանցիկ աճի տեմպ կազմելով 0.6-24.5%:

Պարենային մի խումբ ապրանքատեսակների միջին հանրապետական գները

(դրամով)

Հափի միավորը	1999թ. դեկտեմբեր	2000 թ վ ա կ ա ն					
		հունվար	մարտ	հունիս	սեպտեմբեր	դեկտեմբեր	միջին տարեկան գները
Միս տավարի կգ	1042	1049	1048	1059	992	916	1011
Միս խոզի կգ	1087	1096	1086	1259	1288	1213	1213
Կենդանական յուղ կգ	1508	1509	1437	1376	1340	1472	1409
Բուսական յուղ Լ	617	618	586	560	534	533	562
Կաթ Լ	221	223	226	211	211	256	221
Պանիր կգ	1300	1302	1286	1234	1171	1259	221
Շաքարավազ կգ	222	216	203	226	247	255	230
Չու ( 1 տեսակի ) տասնյակ	456	488	391	363	375	418	391
Հաց ( 1 տեսակի ) կգ	214	214	213	213	207	207	211
Աղ կգ	98	98	99	97	97	97	98
Կարտոֆիլ կգ	98	108	113	93	116	127	107
Կաղամբ կգ	50	63	64	56	138	105	82
Գլուխ սոխ կգ	100	111	129	204	116	236	155
Գազար կգ	91	102	111	128	111	98	109
Խնձոր կգ	217	304	261	316	113	196	212
Թեյ կգ	3332	3340	3190	3150	3146	3147	3189
Սուրճ կգ	2604	2497	2441	2404	2390	2356	2413




**Ոչ պարենային ապրանքներ:** 2000թ. դեկտեմբերին 1999թ. դեկտեմբերի համեմատ ոչ պարենային ապրանքների շուկայում գրանցվել է գների 1.6% հավելած նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի 2.9% հավելածի դիմաց: Հարկ է նշել, որ ընթացիկ տարում ոչ պարենային ապրանքների գնային փոփոխությունները հիմնականում պայմանավորված են բենզինի և դիզելային վառելիքի գների փոփոխություններով: 2000թ. հունվար-ապրիլին գրանցված բենզինի 20.1% գնաճին նայիս ամսին հաջորդել է գնի 5.0% նվազում: Հունիս և հուլիս ամիսներն առանձնացան բենզինի նկատելի գնաճով՝ կազմելով համապատասխանաբար 14.1% և 6.2% (գնաճը հիմնականում պայմանավորված էր միջազգային (ներմուծման) գների բարձրացմամբ): Հաջորդ երկու ամիսներին արձանագրվեց գների համապատասխանաբար 6.5% և 3.9% նվազում: Հոկտեմբերին պահպանվեց բենզինի գնի կայուն մակարդակ, ինչը նույններին վերածվեց 5.3% գնաճի: Դեկտեմբերին գրանցվեց բենզինի գնի 2.6% նվազում, իսկ 1999թ. դեկտեմբերի համեմատ բենզինի ընդհանուր գնաճը կազմեց 27.5%:

2000թ. հունվար-փետրվարին դիզելային վառելիքի գնի ընդհանուր մակարդակի 4.1% նվազմանը հաջորդ 2 ամիսներին հաջորդեց 9.1% գնաճ: Մայիսին դարձյալ գները նվազեցին 2.2%-ով, իսկ հետագա 4 ամիսներին գրանցվեց դիզելային վառելիքի 25.3% ընդհանուր գնաճ, ընդ որում գնաճի ամենաբարձր ցուցանիշը գրանցվեց հուլիսին (17.8%): Ընթացիկ տարվա հոկտեմբերին և նույններին դիզելային վառելիքի գները դարձյալ նվազեցին՝ կազմելով համապատասխանաբար 0.7% և 8.1%, իսկ դեկտեմբերին նախորդ ամսվա համեմատ գրանցվեց դիզելային վառելիքի 0.7% գնաճ: Դեկտեմբերին 1999թ. դեկտեմբերի համեմատ դիզելային վառելիքի գնաճը կազմեց 17.8%:

Բենզինի և դիզելային վառելիքի գնաճ արձանագրվեց դեռևս 1999թ. օգոստոսից, երբ գործողության մեջ դրվեց «Բնապահպանական վճարի դրույքաչափերի մասին» ՀՕՈ-3 ՀՀ կառավարության օրենքի ուժ ունեցող 30.07.99թ. որոշմունքը: 1999թ. օգոստոսից 2000թ. դեկտեմբեր ամիսներին բենզինի ընդհանուր գնաճը կազմել է ավելի քան 1.6 անգամ, իսկ դիզելային վառելիքինը՝ մոտավորապես 1.6 անգամ:

**Բենզինի և դիզելային վառելիքի գների փոփոխությունները 1999-2000թվականներին ըստ ամիսների (1998թ. դեկտեմբերը = 100)**



Ոչ պարենային ապրանքների գների մակարդակի վրա որոշակի ազդեցություն են թողել նաև վառելիքի ապրանքախմբում տեղ գտած գնային փոփոխությունները: 2000թ. մարտ-հուլիս ամիսներին արձանագրված գների 8.5% նվազմանը օգոստոս-դեկտեմբերին հաջորդեց 19.3% ընդհանուր գնաճ, ընդ որում գնաճի ամենաբարձր ցուցանիշը գրանցվել էր նույններին (11.6%՝ կապված հեղուկ գազի 21.1% գնաճով): Դեկտեմբերին նախորդ ամսվա համեմատ վառելիքի

գնաճը կազմել է 0.1%, իսկ 1999թ. դեկտեմբերի համեմատ՝ 10.8%:

Հետազոտվող մյուս ոչ պարենային ապրանքախմբերում ընթացիկ տարում գնային էական փոփոխություններ չեն նկատվել:

2000թ. դեկտեմբերին նախորդ ամսվա համեմատ կոշկեղենի, վառելիքի, խոհանոցային սպասքի, կահույքի, գորգեղենի, տեքստիլեղենի, կենցաղային էլեկտրաապրանքների, շինանյութերի, մշակույթի ապրանքների և ոսկերչական իրերի ապրանքախմբերում գրանցվել է 0.1-0.6% գնաճ: Լվացամիջոցների, այգեգործական, գեղահարդարման ապրանքների, գրենական պիտույքների գները մնացել են նախորդ ամսվա գների մակարդակին, իսկ հագուստի և կտորեղենի, դեղամիջոցների, անձնապիտո ապրանքների գները նվազել են 0.3-0.2 տոկոսով:

**Ոչ պարենային ապրանքների հիմնական ապրանքախմբերի գների փոփոխությունները**  
(տոկոսներով)

	2000 թվականի				դեկտեմբերը 2000թ. նոյեմբերի նկատմամբ	հունվար-դեկտեմբերը 1999թ. հունվար-դեկտեմբերի նկատմամբ
	մարտը	հունիսը	սեպտեմբերը	դեկտեմբերը		
<b>Ոչ պարենային ապրանքներ</b>	100.8	101.7	100.9	101.6	99.6	103.0
<i>այդ թվում՝</i>						
հագուստ և կտորեղեն	98.4	96.2	95.0	96.2	99.8	95.4
վառելիք	100.3	93.7	94.4	110.8	100.1	111.0
կահույք	99.0	99.4	99.8	101.4	100.6	100.0
գորգեղեն	99.6	102.5	102.7	103.4	100.4	101.0
տեքստիլեղեն	97.9	102.4	103.7	104.2	100.2	96.1
կենցաղային էլեկտրաապրանքներ	100.9	101.5	101.1	101.8	100.4	99.4
խոհանոցային սպասք	99.2	99.7	99.3	98.9	100.1	97.8
լվացամիջոցներ	100.5	99.2	100.5	101.1	100.0	95.9
շինանյութեր	99.8	103.8	104.8	104.4	100.4	101.2
այգեգործական ապրանքներ	100.5	97.6	98.8	98.5	100.0	99.0
դեղամիջոցներ	98.9	99.6	94.4	93.3	99.7	90.4
անձնական օգտագործման մեքենաներ և բենզին	110.2	120.7	120.0	120.9	98.1	131.7
մշակույթի ապրանքներ	99.0	95.9	95.8	96.5	100.4	93.9
գրենական պիտույքներ	98.5	99.7	100.5	101.2	100.0	90.7
գեղահարդարման ապրանքներ	99.0	96.5	94.6	94.1	100.0	94.9
ոսկերչական ապրանքներ	100.2	94.4	96.4	97.8	100.1	96.5
անձնապիտո ապրանքներ	98.7	101.2	101.7	99.8	99.7	98.1

**Ծառայություններ.** 2000թ. դեկտեմբերին 1999թ. դեկտեմբերի համեմատ բնակչությանը մատուցված ծառայությունների ոլորտում սակագների հավելաճը կազմել է 1.9%, ինչը 13.3 տոկոսային կետով ցածր է նախորդ տարվա համապատասխան ցուցանիշից (15.2%): 2000թ. բնակչությանը մատուցված ծառայությունների սակագների աճը հիմնականում պայմանավորված է իրավական ու բանկային, մշակույթի, կենցաղային, հանգստի, կրթության, բուժսպասարկման, տրանսպորտի և կապի ծառայությունների սակագների 4.0-2.0% հավելաճով:

2000թ. դեկտեմբերին նախորդ ամսվա համեմատ ծառայությունների ոլորտում նկատվել է սակագների հարաբերականորեն կայուն մակարդակ: Բնակարանային-կոմունալ, առողջապահության, կրթության, հանրային սննդի, իրավական և բանկային ծառայությունների սակագները մնացել են նախորդ ամսվա մակարդակին: Մշակույթի, տրանսպորտի, կապի ծառայությունների սակագներն աճել են 0.2-1.3.տոկոսով, իսկ հանգստի ծառայությունների գծով դիտվել է սակագների նվազում՝ կազմելով 0.1 տոկոս:

**Բնակչությանը մատուցված ծառայությունների հիմնական տեսակների սակագների փոփոխությունները**

	<b>2000 թվականի</b>					
	մարտը	հունիսը	սեպտեմբերը	դեկտեմբերը	դեկտեմբերը 2000թ. նոյեմբերի նկատմամբ	հունվար-դեկտեմբերը 1999թ. հունվար-դեկտեմբերի նկատմամբ
	1999թ. դեկտեմբերի նկատմամբ					
<b>Ծառայություններ, ընդամենը</b>	100.3	100.9	101.4	101.9	100.0	101.5
<i>այդ թվում՝</i>						
կենցաղային	100.4	100.9	101.8	103.5	99.8	101.1
բնակարանային-կոմունալ	100.0	100.0	100.1	100.1	100.0	100.0
բուժսպասարկման	102.1	102.4	102.6	102.8	100.0	103.2
կրանսպորտի	99.7	101.8	102.6	102.6	100.3	100.7
կապի	99.8	100.5	101.0	102.0	100.2	99.9
մշակույթի	99.3	100.1	100.9	103.6	101.3	103.7
կրթության համակարգի	100.5	101.0	102.4	103.1	100.0	112.4
հանգստի կազմակերպման	101.0	102.0	102.6	103.4	99.9	98.7
հանրային սննդի	101.5	101.7	101.8	101.6	100.0	101.9
իրավական և բանկային	100.0	100.0	104.0	104.0	100.0	102.0

**Սպառողական գների և ծառայությունների սակագների տարածքային առանձնահատկությունները:** Հանրապետությունում դիտարկվող բոլոր բնակավայրերում 2000թ. դեկտեմբերին նախորդ ամսվա համեմատ արձանագրվել է սպառողական գների 0.8-3.1% հավելաճ (գնաճի համեմատաբար բարձր ցուցանիշ գրանցվել է Երևանում, իսկ ամենացածրը՝ Հրազդանում (Չարենցավանում)): Հարկ է նշել, որ ընթացիկ տարվա 12 ամիսների ընթացքում հետազոտված բնակավայրերից 7-ում (հիմնականում առավել խոշոր քաղաքներում) արձանագրվել է սղաճ (0.6-1.0%-ի սահմաններում), իսկ մյուս 3 բնակավայրերում՝ գների 2.3-0.3% նվազում:

**Սպառողական գների ինդեքսը 2000թ. սեպտեմբերին նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ, ըստ դիտարկվող բնակավայրերի**

(տոկոսներով)

	<b>1999 թվական</b>			<b>2000 թվական</b>		
	բնակավայրի տեսակարար կշիռը	սպառողական գների ինդեքսը (1999թ. դեկտեմբերի նկատմամբ)	միջին ամսական աճը	բնակավայրի տեսակարար կշիռը	սպառողական գների ինդեքսը (2000թ. դեկտեմբերի նկատմամբ)	միջին ամսական աճը
<b>Հայաստանի Հանրապետություն, ընդամենը</b>	100.0	102,0	100,2	100.0	100.4	100.05
<i>այդ թվում.</i>						
Երևան	55.34	101,1	100,1	57.36	100.6	100.05
Գյումրի	7.85	101,4	100,1	7.09	101.0	100.1
Վանաձոր	7.49	101,2	100,1	7.33	100.6	100.05
Վաղարշապատ	6.29	100,0	100,0	5.90	100.9	100.1
Թալին	3.02	104,6	100,4	2.92	99.3	99.95
Դիլիջան	3.04	104,4	100,4	3.03	100.7	100.05
Հրազդան, Չարենցավան	7.25	107,1	100,6	6.95	97.7	99.8
Եղեգնաձոր	1.30	105,4	100,4	1.22	100.6	100.05
Մարտունի	5.21	105,3	100,4	5.10	99.7	99.95
Կապան	3.21	103,9	100,3	3.09	100.7	100.05

**ՆԿԱՏՎԱԾ ՎՐԻՊԱԿ**

**«1.ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ»-ի «1.3.Գներ և սակագներ» ենթահատվածից չի տպագրվել 6 էջ ծավալով շարունակությունը, ինչը ներկայացվում է ստորև որպես 80 էջի (ա)-ից մինչև 80 էջի (զ) էջեր:**

2000թ. դեկտեմբերին նախորդ տարվա դեկտեմբերի համեմատ հետազոտված բնակավայրերից 5-ում պարենային ապրանքների գները նվազել են 3.3-0.5%-ով: Վանաձորում պահպանվել է գների նախորդ տարվա դեկտեմբերի մակարդակը, իսկ մյուս 4 բնակավայրերում արձանագրվել է պարենային ապրանքների 0.1-1.2% գնաճ: Դեկտեմբերին նախորդ ամսվա համեմատ հետազոտված բոլոր բնակավայրերում արձանագրվել է պարենային ապրանքների նկատելի գնաճ կազմելով 1.5-5.5%, ընդ որում գների ամենաբարձր աճը գրանցվել է Երևանում:

**Հանրապետության հետազոտված բնակավայրերում կարևորագույն պարենային ապրանքների միջին գները՝ 2000թ. դեկտեմբերի 29-դրությամբ**

*(դրամ՝ կգ-ի համար)*

	Միս տավարի	Պանիր	Կարագ	Բուսական յուղ, լիտր	Չու, տասնյակի համար	Շաքարավազ	Կարտոֆիլ	Գլուխ սոխ	Կաղամբ	Խնձոր
<b>ՀՀ, ընդամենը</b>	1122	1274	1526	531	474	254	133	264	144	295
<i>այդ թվում՝</i>										
Երևան	1183	1338	1542	543	475	255	133	275	146	304
Գյումրի	1050	1175	1367	527	463	257	140	260	143	500
Վանաձոր	1150	1200	1500	520	450	247	130	200	130	250
Վաղարշապատ	1200	1300	1550	500	500	250	150	275	170	250
Թալին	1000	1200	1500	500	500	250	150	250	200	200
Դիլիջան	900	1200	1600	500	475	260	140	250	150	270
Հրազդան, Չարենցավան	1000	1200	1500	550	450	250	130	250	130	220
Եղեգնաձոր	1000	1150	1500	480	500	250	100	200	200	150
Մարտունի	900	1100	1500	500	500	250	100	250	80	300
Կապան	960	1100	1680	500	450	266	138	300	150	180

2000թ. դեկտեմբերի վերջին օրերին նկատվեց պարենային ապրանքների գների զգալի աճ: Այսպես, վերը նշված պարենային ապրանքների ընդհանուր արժեքը (յուրաքանչյուրից 1կգ-ի, բուսական յուղի 1լիտրի, ձվի տասնյակի հաշվարկով) 2000թ. դեկտեմբերի 29-ի դրությամբ հանրապետությունում միջին հաշվով կազմեց 6016 դրամ, ինչը 11.9%-ով գերազանցեց նույնանուն ապրանքատեսակների նոյեմբերի 30-ին արձանագրված ընդհանուր արժեքը (5375դրամ): Նշված ժամանակահատվածում պարենային ապրանքներից նվազել է միայն շաքարավազի (1.9%) և բուսական յուղի (0.4%) գները, իսկ մյուս 8 ապրանքատեսակների գծով արձանագրվել է 1.9-73.5% գնաճ (ամենաբարձր գնաճը գրանցվել է խնձորի և կաղամբի գծով): Դիտարկված բոլոր բնակավայրերում վերոհիշյալ ապրանքների ձեռքբերման ընդհանուր արժեքը 4.2-15.0%-ով գերազանցել է նախորդ ամսվա նշված ժամանակահատվածի համապատասխան ցուցանիշը, ընդ որում դեկտեմբերի 29-ի դրությամբ դրանց ձեռքբերման ամենացածր արժեքն արձանագրվել է Մարտունիում (5480 դրամ), իսկ ամենաբարձրը՝ Երևանում (6193 դրամ):

2000թ. դեկտեմբերին նախորդ տարվա դեկտեմբերի համեմատ հանրապետությունում դիտարկված բնակավայրերից 9-ում արձանագրվել է ոչ պարենային ապրանքների 0.7-5.4% գնաճ (գնաճի ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է Դիլիջանում), իսկ Հրազդանում (Չարենցավանում)՝ գների 0.5% նվազում: Ընթացիկ տարվա դեկտեմբերին նույնների համեմատ հանրապետության դիտարկված բնակավայրերից 9-ում ոչ պարենային ապրանքների գները նվազել են 1.0-0.1%-ով: Երևանում ոչ պարենային ապրանքների գները նվազել են 0.4% -ով, իսկ Թալինում գրանցվել է 0.2% գնաճ:

Բնակչությանը մատուցված ծառայությունների ոլորտում ընթացիկ տարվա դեկտեմբերին 1999թ. դեկտեմբերի համեմատ հետազոտված բնակավայրերից 8-ում գրանցվել է սակագների 0.4-4.6% հավելաճ, իսկ Կապանում և Հրազդանում (Չարենցավանում)՝ սակագների նվազում՝ կազմելով համապատասխանաբար 0.3% և 0.2%: 2000թ. դեկտեմբերին նույնների նկատմամբ հանրապետությունում նկատվել է սակագների հարաբերականորեն կայուն մակարդակ, ընդ որում հետազոտված բնակավայրերից 6-ում սակագները մնացել են նախորդ ամսվա մակարդակին, 3-ում գրանցվել է սակագների 0.2-0.3% հավելաճ, իսկ Գյումրիում սակագները նվազել են 0.2%-ով:

**Սպառողական ապրանքների գների և բնակչությանը մատուցված ծառայությունների սակագների ինդեքսը 2000թ. դեկտեմբերին 1999թ. դեկտեմբերի համեմատ, ըստ դիտարկվող բնակավայրերի և ապրանքախմբերի.**

(տոկոսներով)


	Սպառողական գների ինդեքսը	այդ թվում				բնակչությանը մատուցված ծառայությունների
		սպառողական ապրանքների	պարենային ապրանքների (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ)	պարենային ապրանքների	ոչ պարենային ապրանքների	
<b>Հայաստանի Հանրապետություն, ընդամենը</b>	100.4	100.1	99.8	99.4	101.6	101.9
<i>այդ թվում</i>						
Երևան	100.6	100.4	100.2	99.5	101.3	101.9
Գյումրի	101.0	100.5	100.2	100.1	101.7	104.6
Վանաձոր	100.6	100.1	99.9	100.0	100.7	103.8
Վաղարշապատ	100.9	100.9	100.6	100.2	102.5	100.7
Թալին	99.3	99.1	98.7	99.1	101.2	100.5
Դիլիջան	100.7	100.7	99.7	100.3	105.4	100.4
Հրազդան, Չարենցավան	97.7	97.3	96.9	96.7	99.5	99.8
Եղեգնաձոր	100.6	100.6	100.5	101.2	101.0	100.7
Մարտունի	99.7	99.3	98.1	98.1	104.5	102.3
Կապան	100.7	100.8	100.5	99.4	102.2	99.7

**Արդյունաբերողների արտադրանքի գների ինդեքսը:** 2000թ. դեկտեմբերին 1999թ. դեկտեմբերի համեմատ հանրապետության արդյունաբերական ձեռնարկությունների թողարկած արտադրանքի գների ինդեքսը կազմել է 100.4%՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 103.8%-ի դիմաց:

Ընթացիկ տարվա դեկտեմբերին նախորդ ամսվա նկատմամբ արդյունաբերական ձեռնարկությունների թողարկած արտադրանքի գները նվազել են 0.9%-ով: Դրան մեծապես նպաստել են մեքենաշինական (3.8%), թեթև (3.3%), սննդի (ներառյալ ալյուրի ու համակցված կերերի)(2.7%) արդյունաբերությունում թողարկված արտադրանքի գների նվազումը: Էներգետի-

կայի և ռադիոէլեկտրոնիկայի արդյունաբերությունում նույնպես արձանագրվել է գների նվազում կազմելով համապատասխանաբար 0.9% և 0.6%, իսկ թանկարժեք ու կիսաթանկարժեք իրերի, շինանյութերի, գունավոր մետալուրգիայի, անտառային, փայտամշակման, թղթի-ցելյուլոզի, քիմիական, նավթաքիմիական և կենսատեխնոլոգիական արդյունաբերության ճյուղերում և հրատարակչական գործերի արտադրությունում գրանցվել է 0.3-10.7% գնաճ:


**Արդյունաբերական արտադրանքի գների և սպառողական գների ինդեքսները 1999-2000 թթ. ըստ ամիսների (նախորդ ամիսը = 100)**



**Բեռնափոխադրումների սակագների ինդեքս:** 2000թ. դեկտեմբերին նախորդ տարվա դեկտեմբերի համեմատ ընդհանուր օգտագործման տրանսպորտում բեռնափոխադրումների սակագների ամփոփ ինդեքսը կազմել է 104.7%, այդ թվում երկաթուղային տրանսպորտով՝ 104.5%, ավտոմոբիլայինով՝ 105.5%, օդայինով՝ 105.1% և խողովակաշարայինով՝ 104.7%:

2000թ. դեկտեմբերին նախորդ ամսվա համեմատ ընդհանուր օգտագործման տրանսպորտով բեռնափոխադրումների սակագների հավելաճը կազմել է 1.0%, ինչը պայմանավորված է խողովակաշարային (1.0%), ավտոմոբիլային (1.0%), երկաթուղային (0.5%) և օդային (0.4%) տրանսպորտով բեռնափոխադրումների սակագների հավելաճով:

**Ընդհանուր օգտագործման տրանսպորտում բեռնափոխադրումների սակագների փոփոխությունները 2000թ. հունվար-դեկտեմբերին (նախորդ տարվա դեկտեմբերը = 100)**



\*) 2000թ. հունվարից ընդհանուր օգտագործման տրանսպորտով բեռնափոխադրումների սակագների ինդեքսի հաշվարկը կատարվում է տրանսպորտի 4 տեսակներով: Երկաթուղային, ավտոմոբիլային, օդային բեռնափոխադրումներից բացի բեռնափոխադրումների սակագների ինդեքսի հաշվարկման համար դիտարկվում են նաև խողովակաշարային բեռնառաքումների սակագները:

**Գյուղատնտեսական մթերքի իրացման և գյուղատնտեսության արտադրության միջոցների գնման գների ինդեքսը:** 2000թ. դեկտեմբերին 1999թ. դեկտեմբերի համեմատ գյուղատնտեսական մթերքի իրացման գների ինդեքսը կազմել է 101.1%, ինչը 9.0 տոկոսային կետով գերազանցել է նախորդ տարվա համապատասխան ցուցանիշը: Դրան, թերևս, նպաստել են 2000 թվականի անբարենպաստ բնակլիմայական պայմանները: Ընթացիկ տարվա հունվար-սեպտեմբեր ամիսներին (բացառությամբ մարտի), արձանագրվել է գյուղատնտեսական մթերքի իրացման գների 28.1-1.1 տոկոս նվազում (նվազման ամենաբարձր տոկոսը բաժին է ընկնում հունիսին), իսկ տարվա վերջին երեք ամիսները առանձնացան իրացման 1.0-14.8% գնաճով:


2000թ. դեկտեմբերին նախորդ ամսվա համեմատ գյուղմթերքի իրացման գնաճը կազմել է 14.8%, ընդ որում իրացման բոլոր ուղղություններով գրանցվել է նկատելի գնաճ՝ կազմելով 7.7-25.2% (իրացման ամենաբարձր գնաճը արձանագրվել է գյուղմթերքի շուկայում): Հանրապետության դիտարկված մարզերից 9-ում դեկտեմբերին՝ գրանցվել է բուսաբուծական մթերքների իրացման 24.8-4.1% գնաճ (համեմատաբար բարձր գնաճ արձանագրվել է Շիրակում), իսկ Վայոց Ձորում՝ 3.5% գների նվազում:

2000թ. ապրիլ-սեպտեմբեր ամիսներին արձանագրված բուսաբուծական մթերքի իրացման գների նվազումը հաջորդ երեք ամիսներին փոխակերպվել է գնաճի: Գնաճի ամենաբարձր ցուցանիշն արձանագրվել է դեկտեմբերին կազմելով 22.1%: Մթերող կազմակերպություններին իրացված բուսաբուծական մթերքի գները մնացել են նախորդ ամսվա մակարդակին, իսկ անհատ քաղաքացիներին և շուկայում իրացված մթերքների գծով արձանագրվել է գնաճ՝ կազմելով համապատասխանաբար 22.9% և 26.2%:

Բուսաբուծական մթերքի իրացման գնաճին մեծապես նպաստել է բանջարադեմի (28.5%) և մրգի (28.3%) ապրանքախմբերում գրանցված գնաճը (սեզոնայնությամբ պայմանավորված): Գնաճ արձանագրվել է նաև հացահատիկային (4.3%) և կերային (3.0%) մշակաբույսերի ապրանքախմբերում:

2000թ. դեկտեմբերին նախորդ ամսվա համեմատ հանրապետության դիտարկված բոլոր մարզերում գրանցվել է բուսաբուծական մթերքի իրացման 1.1-33.3% գնաճ (գնաճի ամենաբարձր ցուցանիշն արձանագրվել է Կոտայքում):

**Գյուղմթերքների իրացման գների ինդեքսները Հայաստանի Հանրապետությունում 2000թ. հունվար-դեկտեմբերին ըստ բուսաբուծության և անասնապահության ճյուղերի (նախորդ ամիսը = 100,0)**



Անասնապահական մթերքի ոլորտում 2000թ. հունվարի-նոյեմբերին (բացառությամբ փետրվարի) հանրապետությունում նկատվել է իրացման գների նվազման միտում դեկտեմբերին փոխակերպվելով 13.0% գնաճի, ինչի վրա իր անմիջական ազդեցությունն է թողել իրացման բոլոր ուղղություններով անասնապահական մթերքի իրացման 10.0-24.7% գնաճը: Ընթացիկ ամսում անասնապահական մթերքի իրացման գնաճին մեծապես նպաստել է մսամթերքի 13.2% գնաճը: Գնաճ արձանագրվել է նաև կաթնամթերքի (11.7%), ձվի (5.6%), բրդի (16.7%), կաշվեհումքի (6.4%) ապրանքախմբերում: Դեկտեմբերին նախորդ ամսվա համեմատ հանրապետության հետազոտված մարզերից 8-ում արձանագրվել է անասնապահական մթերքի իրացման 4.5-25.4% գնաճ (գնաճի համեմատաբար բարձր ցուցանիշ գրանցվել է Շիրակում), իսկ Սյունիքում և Տավուշում իրացման գները նվազել են համապատասխանաբար 1.5% և 4.7% -ով:

2000թ. դեկտեմբերին 1999թ. դեկտեմբերի համեմատ գյուղատնտեսական մթերքի իրացման գների ինդեքսը կազմել է 101.1%, այդ թվում բուսաբուծությանը՝ 109.1%, անասնապահությանը՝ 99.1%, իսկ հունվար-դեկտեմբերին նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի համեմատ՝ համապատասխանաբար 89.0%, 84.0% և 94.2%:

**Գյուղատնտեսական մթերքների իրացման գների ինդեքսը Հայաստանի Հանրապետությունում, ըստ մարզերի, 2000թ. հունվար-դեկտեմբերին**

(տոկոսներով)

	2000 թ վ ա կ ա ն ի			1999թ. հունվար-դեկտեմբերը 1998թ. հունվար-դեկտեմբերի նկատմամբ
	դեկտեմբերը		հունվար-դեկտեմբերը	
	2000թ. նոյեմբերի նկատմամբ	1999թ. դեկտեմբերի նկատմամբ	1999թ. հունվար-դեկտեմբերի նկատմամբ	
<b>ԳՀ, ընդամենը այդ թվում՝</b>	114.8	101.1	89.0	86.6
Արագածոտն	107.5	101.6	90.2	94.4
Արարատ	113.8	93.2	80.4	88.2
Արմավիր	118.5	105.0	82.3	80.4
Գեղարքունիք	110.1	101.3	89.6	90.1
Լոռի	114.3	98.3	92.7	86.0
Կոտայք	121.6	111.4	100.8	88.6
Շիրակ	124.8	111.9	95.1	86.6
Սյունիք	104.1	106.0	96.7	88.6
Վայոց Ձոր	96.5	86.5	92.6	97.6
Տավուշ	107.8	100.7	98.3	83.0

**Գյուղատնտեսության արտադրության միջոցների գնման գների ինդեքսը Հայաստանի Հանրապետությունում, ըստ մարզերի, 2000թ. հունվար-դեկտեմբերին**

(տոկոսներով)

	2000 թ վ ա կ ա ն ի			1999թ. հունվար դեկտեմբերը 1998թ. հունվար-դեկտեմբերի նկատմամբ
	դեկտեմբերը		հունվար-դեկտեմբերը	
	2000թ. նոյեմբերի նկատմամբ	1999թ. դեկտեմբերի նկատմամբ	1999թ. հունվար-դեկտեմբերի նկատմամբ	
<b>ԳՀ, ընդամենը այդ թվում՝</b>	98.3	107.4	104.3	97.8
Արագածոտն	99.9	110.1	105.3	96.3
Արարատ	111.8	119.9	96.7	95.4
Արմավիր	95.2	100.5	106.5	99.3
Գեղարքունիք	100.7	107.2	108.9	99.7
Լոռի	86.5	121.2	110.5	95.0
Կոտայք	102.2	106.1	97.8	93.4
Շիրակ	100.1	117.2	106.6	95.4
Սյունիք	99.3	105.5	101.9	109.5
Վայոց Ձոր	93.5	101.5	107.1	113.6
Տավուշ	98.0	104.7	100.2	100.2



2000թ. դեկտեմբերին նախորդ տարվա դեկտեմբերի համեմատ գյուղատնտեսության արտադրության միջոցների գնման գների ինդեքսը կազմել է 107.4%, ինչը 9.6 տոկոսային կետով գերազանցել է նախորդ տարվա նույն ժամանակահատվածում գրանցված ցուցանիշը (97.8%):

Ընթացիկ տարվա դեկտեմբերին նոյեմբերի համեմատ գյուղատնտեսության արտադրության միջոցների գնման գները նվազել են 1.7%-ով, ինչը հիմնականում պայմանավորված է անասունների (13.5%), էներգիայի և քսայուղերի (0.9%) գների և գյուղատնտեսության վճարովի ծառայությունների սակագների (4.7%) նվազմամբ: Դրան զուգընթաց, գյուղատնտեսական մանր գործիքների, անասնակերի, շինանյութերի, սերմացուների ու տնկիների ապրանքախմբերում գրանցվել է 3.3-7.9% գնաճ, իսկ մեքենա-սարքավորումների և դրանց պահեստամասերի գնման գները մնացել են նախորդ ամսվա մակարդակին:

2000թ. դեկտեմբերին նախորդ ամսվա համեմատ հանրապետության դիտարկված մարզերից 6-ում գյուղատնտեսության արտադրության միջոցների գնման գները նվազել են 13.5-0.1%-ով (նվազման համեմատաբար բարձր ցուցանիշ գրանցվել է Լոռիում), իսկ մյուս 4 մարզերում արձանագրվել է գնման 0.1-11.8% գնաճ: